ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ—ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՆՇՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ը-ՐԴ ՆԻՍՏ 1892 ԹՈՒԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ։

—

Սոյն նիստում լսուեց՝ Ա. Օրիորդ Զարուհի Նազարեանի խընդիրը, որով յետ է ուզում իւր ուսման վկայականը և խնդրում է յայտնել իրան թէ՝ մուծո՞ւած է իւր անունը ուսուցչաց ընդհանուր ցուցակում թէ ոչ։

Բ. Մելքոն Ասլիբէգեանի խնդիրը, որով յետ է ուզում իւր ուսման վկայականը և խնդրում է բացադրութիւն իւր անունը ուսուցչաց ընդհանուր ցուցակում չմոցնուելու համար։

Գ. Արձախի թեմի եկ.—ծխ. դպրոցների թեմական տեսչի յայտարարութիւնները. առաջինը սոյն տարուայ Սեպտեմբերի 10-ին 141 համարով, և երկրորդը նոյն թուին և ամսաթուին, որոնցով ուղարկելով Ստեփան Ստեփանեանի, Յովսէփ Զանումեանցի, Գրիգոր Գուրջեանցի, Մելիք Սըլդըրեանցի և Բալաբէգ (Աւագ) Տէր-Ղուկասեանի ուսման և ուսուցչութեան իրաւանց վկայականները խնդրում է մոցնել նոցա անունները ուսուցչաց ընդհանուր ցուցակում։

Դ. Սրբազան Սինոդի առաջադրութիւնը թ. 2805 21 Սեպտեմբերի, որով ուղարկում է Մարտիրոս Տէր-Իսրայէլեանի խընդրագիրը ուսման վկայագրի հետ ի տնօրէնութիւն։

Ե. Վրաստանի և Իմերէթի թեմի եկ.—ծխ. դպրոցների թեմական տեսչի երեք յայտարարութիւնները. առաջինը սոյն տա-

ռուայ Սեպտեմբերի 19-ին թ. 67. որով յայտնում է թէ ինքը շատ անգամ «խնդրել և թախանձել» է թեմի Գերապատիւ Առաջնորդ հանգուցեալ Մամբրէ եպիսկոպոսին, որպէս զի «թեմի դպրոցների ուսուցիչներն և ուսուցչուհիները չկարողանան ինքնագլուխ և իրանց ուզած ժամանակ թողնել իրանց պաշտօններն և փոխադրուել կամ այլ թեմ և կամ նոյն իսկ թեմի միւս դպրոցները. իրանց աջակից և պաշտպան ունենալով Հոգաբարձութիւնը: Իմ խնդիրը ընդունելով և յարգելով հանգուցեալ Մամբրէ եպիսկոպոսը դիմեց ուր հարկն է և հրահանգ խնդրեց: Բայց մինչև օրս որևէ կարգադրութիւն չեղաւ: Եւ ես ամսոյս 16-ին վերադառնալով Բագուից Թիֆլիզ, ցաւօք սրտի, տեսայ, որ վերոյիշեալ անկարգութիւնը կրկնուում է և փոփոխութեանց մոլի հոգաբարձուք և ուսուցիչք և ուսուցչուհիք ամենայն ճիգ թափում են իրանց անձնական կրքերին, հաշիւներին և յարմարութիւններին զոհ բերել դպրոցական ընդհանուր շահերն, որոնք ըստ ամենայնի վնասուում են յիշեալ անկարգութեան պատճառաւ»:

«Բազմագիմի յորդորներ կարդալով և ընդդիմադրութիւններ անելով Խնդերձ՝ ես, այնուամենայնիւ ստիպուած եղայ այս անգամ ևս ինքնակամ հրաժարուած ուսուցիչներին փոխարինել նոր անձնաւորութիւններով, որոնց ուսման վկայագրերն ընդ այսմ ներկայացնելով պատկառելի Յանձնաժողովիդ՝ խոնարհաբար խնդրում եմ դորա բարեհաճ կարգադրութիւնը՝ նրանց անունը ուսուցչական ընդհանուր ցուցակի մէջ մուծանելու նկատմամբ»: Դոքա են՝ — 1. Ստեփաննոս Կարապետեան. 2. Ղուկաս Տէր Դաւթեան, 3. Սարգիս Ճղմաճեան, 4. Մկրտիչ Ղևինեան, 5. Արմենակ Ռափայէլեան, 6. Նունէ Ազոյեանց, 7. Մարգար Սահմեանց, 8. Յակոբ Շահնազարեանց, 9. Մկրտիչ Փեշտմալճեան, 10 Մկրտիչ Խաչատրեանց:

«Ի վերջոյ պատիւ ունիմ յայտարարել պատկառելի Յանձնաժողովիդ, որ ի նկատի առնելով ժամանակի սղութիւնը, սոյն տասն անձանց ես իմ կողմից արդէն թոյլատրել եմ մտնել իրանց պաշտօնի մէջ»:

Երկրորդը՝ նոյն ամսի 19-ին թ· 69, որով ներկայացնում է Սոֆիա Դեմենաևայի վկայագիրն և խնդրում է մոցնել նորա անունը ուսուցչաց ընդհանուր ցուցակում· աւելացնելով՝ «Ի տեղեկութիւն պատկառելի Յանձնաժողովոյդ պատիւ ունիմ յայտնել և այս, որ Սոֆիա Դեմենաևան (նախկին Իշխանուհի Աբա-Մելիքեան) քաղաքիս Ս· Գայանեան ուսումնարանի կար ու ձևի նախկին վարժուհին է և ահա երկրորդ տարին է, որ աւանդում է նոյն առարկան, ամենայն յաջողութեամբ, Թանդոյեան երկդասեան օրիորդաց դպրոցում»:

Եւ երրորդը՝ նոյն ամսի 20-ին թ· 74· որով ներկայացնում է օրիորդ Շուշանիկ Քեանդարեանի ուսման վկայագիրն և խընդրում է մուծանել նորա անունը ուսուցչաց ընդհանուր ցուցակում: Հայր Տեսչի սոյն յայտարարութիւնից երևում է, որ յիշեալ օրիորդը անցեալ ուսումնական տարում ուսուցչուհի է եղել Դիլիջան գիւղի օրիորդաց դպրոցում· և ներկայ ուսումնական տարումն էլ միևնոյն դպրոցումն է:

Զ· Երրորդ կարգի ուսուցիչ Կոստանդին Գիւլնազարեանի խընդիրը Գերապատիւ Նախագահի անունով, որով բողոքում է թէ՝ «Տեղիս ուսուցիչներից ոչ միայն ես, այլ շատ շատերը անելանելի դրութեան մէջն են Վրաստանի և Իմերէթի թեմի Տեսուչ Գեղամեանի շնորհիւ, որ առանց որևէ պատճառաբանութեան տեղ չէ տալիս մեզ՝ այնպիսի ուսուցիչներիս, որոնք արդէն ընդհանուր ուսուցչաց ցուցակն ենք մուծած և վայելում ենք ուսուցչական իրաւունք»:

Յանձնաժողովիս մէջ ստացուած են նոր դասագրքեր ընդհանուր ցուցակում մոցնելու համար· դրքա են՝ 1· Новая книжка для обученія Русскому языку въ Армянскихъ начальныхъ школахъ годъ I· и II·

Ս· Ամիրանեանի և Գ· Տէր-Գաբրիէլեանցի:

2· Նախաշաւիղ կրօնագիտութեան մասն առաջին· Նախագիտելիք Քրիստոնէական հաւատոյ և Հին և Նոր Կտակարանի համառօտ պատմութիւն Յովսէփ ա· ք· Օրբելիի, առաջարկուած օրիորդ Կատարինէ Օրբելիից:

3. Թուաբանական խնդիրներ և օրինակներ Տարրական դաս-ընթացք Մասն երկրորդ Գրիգորիս Երզնկեանցի Գ. տարի՝ ու-ղարկուած Տփխիսի կեդրոնական գրավաճառանոցից։

4. Համառօտ Քրիստոնէական վարդապետութիւն ըստ դաւա-նութեան Հայոց առաքելական ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ. Սար-գիս քահ. Բէգնազարեանցի՝ Ս. Սինօդից ուղարկուած 1892 թուի Յուլիսի 14-ի Թ. 2038 առաջարկութեամբ՝ «Պատուիրէ Յանձնա-ժողովոյդ ըստ տուեալ ինքեան իրաւանց քննել զայն իբրև դա-սագիրք ի դէպս ընդունելի լինելոյ ի շարս դասագրոց կամ ո՛չ՝ յայտնել սմին զհետևանս։

5. Կրօնի երեք դասատետր Ա. Բ. և Գ. տարի Սահակ քահ. Սահակեանի։

Յանձնաժողովում դասագրքերի թոյլտուութեան խնդիրը քըն-նելիս կարդացուեցան Ա. Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակը, ո-րով հաստատում է Յանձնաժողով և որոշում է նորա պարտակա-նութիւնները, որոնց թւում չէ նկատւում դասագրքեր ընդու-նելու և գործադրութեան ուղղակի հրաման տալու իրաւունքը։ Բացի սորանից, երբ որ Աստարխանի թեմի Առաջնորդը յայտարա-րութեամբ 1889 թ. ներկայացրել է դասագիրք ռուսերէն լեզուի և խնդրել է իրաւունք գործադրելու թեմի եկ.-ծխ. դպրոցներում՝ Նորին Վեհափառութիւնը մակագրել է «Պատուիրեմք Ուսումն-վարչական Յանձնաժողովոյ ի քննելն առնուլ զ'իւմին նշանակեալ դասագրեանս և յայտնել մեզ եթէ յարմարաւո՞րք են այսոքիկ ի գործադրութիւն յեկեղեցական-ծխական ուսումնարանս մեր» (ի 12 յունուարի 1870 ամի № 18)։

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՎՃՌԵՑ.

Ա. Յետ ուղարկել օր. Նազարեանի վկայականը, յայտնելով որ իւր հարցման մասին կարող է դիմել թեմական տեսչին։։

Բ. Յետ ուղարկել Ալիբէգեանի վկայականը։

Գ. Ընդունել ուսուցչաց ընդհանուր ցուցակում վերոյիշեալնե-րից 17 հոգու *)։

*) Տես ընդունուածների ցուցակը.

Դ· Գիւլնազարեանի խնդիրը յանձնել քննութեան։

Ե· Բարեկրօն Եղիշէ քահանայի վերոյիշեալ յայտարարութիւններից տեսնւում են ա· թէ նա թոյլ է տալիս իրան կարգել ուսուցիչներ կամ ուսուցչուհիներ այնպիսիներին, որոնք դեռ ուսուցչական ցուցակը մտած չեն (Սոֆիա Դեմենտևա և Շուշանիկ Քեանդարեան) և մի տարուց յետոյ միայն առաջարկել նորանց անունները ցուցակ մուծանելու։ բ· մինչդեռ ձեմարանական և ուրիշ բաղմաթեայ փորձառու ուսուցիչներից շատերը դիմելով Նորին Բարեկրօնութեան՝ չեն կարողանում ստանալ ուսուցչական տեղեր, մինչդեռ ինչպէս յայտնի է Յանձնաժողովիս հասած գրաւոր բողոքներից, ուսուցիչներ են կարգւում այս տարի Ներսիսեան Հ· դպրանոցից աւարտածները, որոնց մի քանիսի վկայականները պարզ ցոյց են տալիս նորանց պատրաստուած լինելու չափը։ Երրորդ մինչդեռ հոգաբարձութեանց և ուսուցիչների ուսուցչուհիների անունով Հ· վերատեսուչը մեղադրանք է կարդում իբրև յաճախ փոփոխութիւններ սիրողների, միւս կողմից ակնյայտնի են բաղմաթիւ փաստեր, որոնք ապացուցանում են թէ ընդհակառակն այդպիսի յաճախ փոփոխութիւնները կատարուել և կատարւում են Թիֆլիզի թեմում, նոյն իսկ Հ· վերատեսչի կարգագրութեամբ և ցանկութեամբ։ Այս բոլորից պարզւում է մէկ անվիճելի ճշմարտութիւն· այն՝ որ Վրաստանի և Իմերէթի Եկ·—Ծխ· ուսումնարանների կեանքի մէջ կատարւում են անկանոն երևոյթներ, որոնց պատճառների քննելը և վաղօրօք առաջն առնելը, ոչ մէկ տեսակէտից յետաձգելի չէ կարելի համարել· դոցա վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները, ինչպէս գանգատաւորներինը, նոյնպէս իրան՝ թեմական Տեսչինը՝ ապացուցանում են անհրաժեշտութիւնը Վրաստանի և Իմերէթի ուսումնարանների այժմեան դրութեան քննութիւնը, այդ պատճառով խնդրել Ամենապատիւ Տէր Տեղակալից թոյլադրութիւն ուղարկելու Յանձնաժողովիս անդամ բարեշնորհ Լևոն Աբեղային քննիչ վերոյիշեալ թեմը տեղն ու տեղը քննելու վերոյիշեալ կէտերը և ներկայացնել իւր քննութեան արդիւնքը Յանձնաժողովիս ի տնօրէնութիւն։ Այս մասին

տալ տեղեկութիւն թիֆլիզի թեմի եկ. ծխ. դպրոցների Հ. Վեր-բատեսին և առաջադրել, որ հարկաւոր բոլոր տեղեկութիւնները կամ բացատրութիւնները շտապի հաղորդելու նորին բարեշնորհութեան։

Ինչպէս երևում է Վեհափառի վերոյիշեալ կոնդակից և մակագրութիւնից ցանձնաժողովս իրաւունք չունի Հայ Եկ.—Ծխ. գպրոցների համար նոր դասագրքեր աւելացնելու առանց Վեհափառ Հայրապետի բարձրագոյն հրամանի, այլ միայն քննել և քննութեան հետևանքը ներկայացնել. ուստի ցանձնաժողովս առժամանակ թողնում է վերոյիշեալ դասագրքերը ընդհանուր ցուցակում մոցնելը մինչև Վեհափառ Կաթուղիկոսի գալուստը։

ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ ԽՆԴՐՈՂՆԵՐԻՑ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԵՆ ՄԻԱՅՆ ՅԵՏԱԳԱՅ ԱՆՁԻՆՔ.

		Կարգ.
1.	Նազարէթեան Արամ . .	Դ.
2.	Կարապետեան Յարութիւն .	Դ.
3.	Ատոմեան Կարապետ . .	Ե.
4.	Զարիֆեան Վահան . .	Ե.
5.	Նահապետեան Թորգոմ . .	Ե.
6.	Տէր Յակոբեան Ստեփաննոս .	Ե.
7.	Տէր Սահակեան Արսէն . .	Ե.
8.	Խահակեան Արամ . .	Ե.
9.	Գէորգեան Թադէոս . .	Ե.
10.	Ջինանեան Գէորգ . . .	Ե.
11.	Յովնանեան Սահակ . .	Ե.
12.	Տէր Բարսեղեան Յովհաննէս .	Ե.
13.	Խաչատրեան Հայկ (Աղէքսանդր)	Ե.
14.	Թումանեան Յովհաննէս . .	Ե.
15.	Տէր Յովհաննիսեան Աւետիս .	Դ.
16.	Բաբախանեան Վաղարշակ .	Ե.
17.	Ստեփանեան Զուրաբ . .	Դ.

18· Ազիզեան Գէորգ · · · Ե·
19· Ղարիբեան Եաղուբ · · Դ·
20· Բաբայեանց Զապէլ · · Ժ·
21· Թադէոսեան Խաչատուր · · Գ·
22· Միքայէլեան Վահան · · Գ·
23· Արշակունի Վարոս · · Գ·
24· Խուդավերդեանց Խաչատուր · Գ·
25· Ահարոնեան Ահարոն · · Գ·
26· Գասպարեան Հայրապետ · · Գ·
27· Հովհաննեանց Սահակ · · Գ·
28· Շահբազեան Նիկողայոս · · Գ·
2 · Աւետիսեան Արշակ · · Լ·
30· Տէր-Մկրտչեան Խաչատուր · Լ·
31· Տէր-Մատթէոսեան Սաղաթէլ · Լ·
32· Մահտեսի Յովհաննիսեան Ցարութիւն Լ·
33· Տէր-Մելքիսեդեկեան Սարիբէգ · Լ·
34· Աւետիսեան Յովհաննէս · · Լ·
35· Բիշարեան Մելքիսեդեկ · · Լ·
36· Աւետիսեան Սմբատ · · Լ·
37· Թալալոյլեանց Մկրտիչ · · Լ·
38· Շիրակունի Ստեփաննոս · · Լ·
39· Տէր-Աւետիսեան Անտոն · Լ·
40· Լալայեանց Խաչատուր · · Լ·
41 Ջանումեանց Յովսէփ · · Դ·
42· Գուրջեանց Գրիգոր · · Ե·
43· Սըլդըրեան Մէլիք · · · Դ·
44· Տէր-Ղուկասեան Բալաբէգ (Աւագ) Դ·
45· Ստեփանեան Ստեփան · · Դ·
46· Ղալաբէգեան Միքայէլ · · Գ·
47· Կարապետեան Ստեփաննոս · Գ·
48· Տէր-Դաւթեան Ղուկաս · · Գ·
49· Ճզմնաճեան Սարգիս · · Գ·
50· Ղևինեան Մկրտիչ · · · Գ·

51· Ռափայէլեան Արմենակ . . Գ·
52· Խաչատրեան Մկրտիչ . . Գ·
53· Սահակեանց Մարգար . . Գ·
54· Շահնազարեանց Յակոբ . . Գ·
55· Փեշտմալճեան Մկրտիչ . . Ե·
56· Դիմէնտեւա Սոֆիա . . ԺԱ·
57· Տէրիսարայէլեանց Մարտիրոս . Գ·